

ԿԱՇԻՆ ՔԵՐԵԼԸ ԵՎ ՔԵՐԹԵԼՆ ԸՍՏ ԶՐԱՂԱՇՏԱԿԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Կասկածյալի կամ մեղադրյալի կաշին քերելը, այն վնասելը և այդպիսով նրանց տառապանքներ պատճառելը եղել է, մախ, զրադաշտական մախաքննական և դատաքննական հնարանք, կասկածյալի, մեղադրյալի հարցաքննության եղանակ և մեթոդ, նրանց վրա ներգործության միջոց՝ համագործակցության հակելու, անհրաժեշտ ցուցմունքներ կորզելու, ինքնախոստովանության հակելու և զղջում կորզելու միջոց: Այն իրականացվել է հատուկ քերող-քերթող գործիքի միջոցով, որի ժամանակ կասկածյալի կամ հանցավորի կաշին (մաշկը) մասնակիորեն կամ տեղ-տեղ քերվել և վնասվել է: Կաշին քերելը, ինչպես նաև դրա ավելի ինտենսիվ և դաժան ծևը՝ հոշոտելը (ըստ Ազաթանգեղոսի՝ «հօշելը»), նշանակվել է նաև որպես մարմնական պատժամիջոց, և դատավճռի հիման վրա կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց մեղքը կատարած հանցագործությունների մեջ հիմնավորվել է մախաքննությամբ: Եղե՞լ է արդյոք կաշին քերելը կամ հոշոտելը որպես մահապատժի տեսակ՝ առայժմ դժվար է ասել:

Կաշին քերելու և հոշոտելու կիրառման նպատակը եղել է ոչ միայն կասկածյալին կամ դատապարտյալին ցավ պատճառելը և ստորացնելը: Այն ունեցել է նաև պրոֆիլակտիկ-մախականիչ նշանակություն, ընթացել որոշակի ձևերով, և կրել ծիսական-դատավարական արարողակարգային բնույթ: Դրա ընթացքում մարդկանց մարմիններն այլանդակել են և կարելվույն չափ դիվական տեսքի բերվել: Ըստ զրադաշտական հավատալիքների՝ դժոխք ընկած մեղավոր հոգիներին հետևողականորեն տանջում և նրանց մարմիններն այլանդակում էին դները: Դժոխք (իսկ հանդերձյալ կյանքում հանցագործի հոգու տեղը միայն դժոխքն էր, դների կացարանը կամ ստի ու արցունքի տունը) ընկնողներին դները սիստեմատիկաբար և անընդհատ կտտանքների էին ենթարկում՝ նրանց նկատմամբ կիրառելով սահմնկեցուցիչ տանջալից միջոցներ, որոնցից էին նաև կաշին քերելը, հոշոտելը, մասամբ կամ լրիվ քերթելը: Լինելով մարմնապես և հոգեպես այլանդակ, դները դժոխք ընկած հոգեպես այլանդակ մարդկանց հոգիները սիստեմատիկ տանջելու միջոցով ֆիզիկա-

պես նույնպես այլանդակում, դժոխային տեսք էին հաղորդում, ինչն արտացոլված է «Արտա Վիրապ Նամակի» 18-ից 112-րդ՝ դժոխքին վերաբերող գլուխներում¹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաշին քերթելը կամ մորթազերծ անելը (կաշին տիկ հանելը) արմատապես տարբերվել է քերելու և հոշոտելու միջոցով քննություն կատարելու միջոցներից, հնարքներից և այդպիսի մարմնական պատիժներից: Այն հանդիսացել է զրադաշտական աշխարհում մահապատժելու ամենատարածված, հրապարակորեն կիրառվող, սարսափահարույց պատժատեսակներից մեկը: Եթե կաշին քերելիս կամ հոշոտելիս այն փշացվել է, ապա քերթելիս այն հնարավորինս անվնաս կերպով անջատվել է մարմնից: Ընդ որում, դրա ժամանակ դատապարտյալը եղել է (պետք է լիներ) կենդանի, և դրա հետևանքով մահացել է սարսափելի ցավերից: Սա կոչվել է նաև «ծանր մահ պատճառել»², քանզի ժամանակի մեջ ուղեկցվել է սարսափելի տանջանք-տառապանքներով, ի տարբերություն «թեթև մահի», որի տակ հասկացվել է այնպիսի մահապատիժը, որի դեպքում մահը վրա է հասել անմիջապես, և չի ուղեկցվել տանջանքներով: Կաշին քերթելը տարբերվում է կաշին քերելուց և դրա առավել որակյալ ձևից՝ հոշելուց կամ հոշոտելուց նրանով, որ եթե կաշին քերելու, հոշոտելու և այն մասնակիորեն վնասելու նպատակը եղել է կասկածյալին կամ դատապարտյալին տանջանքներ պատճառելը, այլանդակելը և այլն, ապա կաշին քերթելու նպատակների շրջանակն ավելի լայն է:

Դրա նպատակներն են եղել հանցագործին հնարավորինս շատ ցավ և տառապանք պատճառելը, մահապատժվածի ազգակիցներին, ազգականներին ու բարեկամներին առավել վիշտ, ստորացում պատճառելը և նրանց նկատմամբ արհամարհանք արտահայտելը, ինչպես նաև ականատեսների ու ժամանակակիցների վրա սարսափ տարածելը՝ հանցագործության որոշակի ծանր, որակյալ տեսակներ կանխելու համար: Նման մահապարտի կաշին մշակվել է, որից հետո դրա մեջ խոտ է լցվել և ցուցադրվել առավել անպատշաճ, վիրավորական կերպով: Նման մահապատժի տարատեսակ է եղել միայն գլխի կաշին քերել-քերթելը (լայնացնելը), և այդ կերպ մահ պատճառելը:

Կաշին քերթելը կիրառվել է առանձնապես ծանր հանցագործություններին կատարման համար, հիմնականում՝ թագավորների, աստվածների նկատմամբ «անշնորհակալ» գտնվողների, անհավատների, աղանդավորների, պե-

¹ Տես Արտա Վիրապ Նամակ, Պաշտոններն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 66-112:

² Տես Արտա Վիրապ Նամակ, Գլ. 22, էջ 68:

տական դավաճանության մեջ մերկացվածների և սեռական բնույթի որոշ հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ:

Անդրադառնա՞նք, նախ՝ կաշին քերելուն և հոշոտելուն: Ինչպես արդեն ասվել է, կաշին քերելը կիրառվել է ոչ միայն որպես պատիժ, այլ նաև որպես կասկածյալի, մեղադրյալի հարցաքննության միջոց ու եղանակ, նրանց վրա ներգործության հնարանք՝ քննչական-դատական մարմինների հետ կասկած-յալներին և մեղադրյալներին համագործակցության, ինքնախոստովանության և զղջման մղելու համար: Այն կիրառվել է Գրիգոր Լուսավորչի նկատմամբ զրադաշտական քրեական իրավունքով նախատեսված մի շարք հանցագործությունների՝ անհավատության, աղանդավորության, ամբարշտության, անշնորհակալության, ստախոսության և խաբեբայության մեջ, մերկացվելուց (իր նախածեռնությամբ) հետո, երբ նա շուրջ քսան օր հարցաքննվելիս է եղել այդ արարքների մեջ նրա մեղքը հիմնավորելու համար:

Դրա մասին Ագաթանգեղոսը պատմում է հետևյալը. Երբ Տիրիդատ Երրորդ Մեծ թագավորը տեղեկացել է այն մասին, որ նրա շքախմբի անդամ Գրիգորը ոչ թե զրադաշտական է, այլ քրիստոնյա, որ նա՝ անշնորհակալություն դրսևորելով զրադաշտական աստվածների նկատմամբ, մամավանդ՝ «փառք ազգիս մերոյ և կեցուցիչ» Անահիտ աստվածուհու, և քրիստոնյա դարձել՝ հարելով այդ ժամանակ դեռևս քիչ հայտնի այդ աղանդին, ապա քննություն է սկսել՝ գործի բոլոր հանգամանքները պարզելու համար: Քննության ընթացքում պարզվել է, և դա հիմնականում՝ Գրիգոր Լուսավորչի ինքնախոստովանական ցուցմունքներից, որ, իսկապես, նրա արաքն իր մեջ, ըստ զրադաշտական իրավունքի, պարունակում է ստախոսության, ապեբախտության (անշնորհակալություն), անհավատության, աղանդավորության և այլ հանցակազմեր: Նախաքննության ընթացքում դրանց ավելանում է նաև ամբարշտությունը, այն է՝ մարտնչող անհավատությունը, աստվածհայիությունը, քանի որ տանջանքներ կրելու ընթացքում Գրիգոր Լուսավորիչն ակտիվորեն նշավակում և հայիոյում էր զրադաշտական աստվածներին՝ նրանց անվանելով ոչ աստվածներ, դևեր: Իսկ դա ամբարշտության և աստվածհայիության կատարյալ դրսևորում է և ծանր հանցագործություն: Պետք է նշել, որ ամբարշտությունը և աստվածհայիությունը ավելի ծանր հանցանքներ են, քան անհավատությունը: Եթե անհավատությունը կարող է դրսևորվել նաև անգործությամբ՝ պաշտամունքներ կատարելուց, զոհեր մատուցելուց, նվիրաբերություններ կատարելուց խուսափելու միջոցով, ապա սրանք դրսևորվում են միայն գործողությամբ՝ ուղեկցվելով հակակրոնական քարոզչությամբ, աստվածա-

հայիոյութամբ, նրանց նկատմամբ անշնորհակալութեան դրսևորումներով և այլ գործողութիւններով:

Անհավատութիւնը աստվածների, երկնային թագավորութեան և դժոխքի գոյութեանը, հոգու փրկութեանը և ավետական այլ ճշմարտութիւններին ու զրադաշտական դոգմաներին չհավատալն է: Ստախոսութիւնը բազմիմաստ տերմին է, որի գլխավոր իմաստը և նշանակութիւնը նույն անհավատութիւնն է: Նույնը կարելի է ասել ապերախտութեան մասին, որը դրսևորվում է աստվածների, տերերի, ընտանիքի, հայրենիքի նկատմամբ անշնորհակալութիւն դրսևորելու, նրանցից երես դարձնելու մեջ:

Աղանդավորութիւնը անհավատութեան տեսակ է, ուսմունք, նրանց համայնքը՝ խմբակային շահերի շուրջ հավաքված մարդկանց համրութիւն՝ անջատված, շեղված որևէ տիրապետող կրօնից, եկեղեցուց՝ և հակադրվող դրանց, տվյալ դեպքում՝ զրադաշտութեանը: Այն նույնպէս հակաիրավական արարք է հանդիսացել զրադաշտութեան մեջ, նույնպէս ծանր հանցագործութիւն, վտանգավոր՝ զրադաշտական հասարակութեան ու երկրի տիրակալների համար: Ավետայի «Արդվիսուր-յաշտի» 92-րդ տանը Անահիտ աստվածուհին ասում է. «Իմ Զատուրով չպետք է երանութիւն ստանան տենդավորը, աղեթափը, որևէ կին ու համայնական, նրանք՝ ովքեր գաթա չեն երգում...»: «Տիշտըր-յաշտի» 59-րդ և 60-րդ, «Վարախրան-յաշտի» 51-րդ և 52-րդ տներում այդ նույն միտքը նորից ու նորից կրկնվում է: Դրան ավելացվում է նաև, որ այն անձինք, ովքեր թեն զրադաշտական են իրենց համարում, բայց գաթա չեն երգում, ապա չպետք է զոհաբերութիւններ անեն աստվածներին³: Դա էլ նշանակում է, որ գաթա երգելուց հրաժարվողները դիտվել են աղանդավորներ, և նրանց արգելվել է մուտքը սրբավայրեր՝ մինչև նրանց «բուժվելը»: Իսկ զոհաբերութիւններ կատարելու հնարավորութիւնից զրկվելը նշանակում էր զրադաշտական համայնքից վտարում, մեկուսացում, քաղաքացիական իրավունքներից զրկում, և, վերջին հաշվով՝ կործանում: Հասկանալի է, որ առավել խիստ կարող էր լինել վերաբերմունքը այն աղանդների ու աղանդավորների նկատմամբ, որոնք զրադաշտականութեան հետ կապ չունեին և նրան հակադրված էին: Նկատենք նաև, որ Գրիգորի գործած արարքներն Ավետայի «Վիդնդատ» մասքի «Աշխարհագրական պոեմ» ֆրակարդի 7-րդ տանը կոչ-

³ Стн Авеста в русских переводах (1861-1996)...., Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Санкт Петербург, 1998, էջ 190-191, 206, 353.

վում են «մտքի տատանումներ» (երկմտություն, անհավատություն և այլն)՝ համարվելով խիստ վտանգավոր հանցագործություններ⁴:

Ազաթանգեղոսի ժառանգությամբ զբաղվող գիտնականները զարմանալիորեն հեռու են նրա ստեղծագործությունը զրադաշտականության և Ավեստայի հետ կապելուց: Այնինչ՝ դրանք անքակտելի միասնության մեջ են: Իսկ Ավեստան և զրադաշտությունը զուտ հայկական և ոչ թե պարսկական երևույթներ են: Դրանք հայերին չեն պարտադրվել, այլ ընդհակառակն, Զայաստանից են տարվել Իրան: Նրանք նաև այդպես էլ չեն ըմբռնել, թե ինչու է թագավորը, ըստ Ազաթանգեղոսի ներկայացման, անծամբ զբաղվել Գրիգոր Լուսավորչի արարքների քննությամբ, և թե ինչու է օրեր ու շաբաթներ շարունակ քննել նրան, պարբերաբար տանջանքների ենթարկել՝ փորձելով համոզել և հակել նորից «ճշմարիտ» հավատին դառնալ: Այդ երևույթը համարվել է Ազաթանգեղոսի կողմից կիրառված ստեղծագործական հնարանը, որով նա, իբր, փորձել է ցուցադրել Գրիգոր Լուսավորչի՝ որպես քրիստոնեական մարտիրոսի կայունությունը և արիությունը: Այնինչ, Ազաթանգեղոսը ներկայացրել է ոչ միայն Գրիգորի ցուցաբերած, սովորական մարդու ուժերից վեր, տոկունությունը, այլև դեպքերի իրական պատկերը և ընթացքը:

Գրիգոր Լուսավորչի դեմ քրեական գործ է հարուցվել, նա քննվել է որպես կասկածյալ, հետո էլ՝ մեղադրյալ, քանզի նա իսկապես էլ խախտել է զրադաշտական իրավունքի մի քանի նորմերի պահանջներ: Այդ իրավունքի տեսակետից նա հանդես է եկել ոչ միայն որպես անհավատ, աղանդավոր, ամբարիշտ, այլև «ստախոս» և «անշնորհակալ» (ապերախտ): Դրանք բոլորը ծանրագույն հանցագործություններ են և Ավեստայում դատապարտվում ամեն քայլափոխի, և ի հակադրություն՝ ամեն քայլափոխի փառաբանվում է «ճշմարտությունը»⁵: Թագավորի մոտ ծառայության ընդունվելիս նա իսկապես էլ թաքցրել էր իր իսկական ծագումը և կրոնական պատկանելությունը, չէր կարողացել բավարար չափով հիմնավորել իր ազնվական լինելը և պատկանելությունը հայկական իշխանական տոհմերից մեկին՝ դրանով իսկ ստախոսել ու խաբել: Այս արարքները փաստորեն իրենցից ներկայացնում են հանցագործությունների յուրահատուկ բազմակիության՝ իդեալական համակցության տարատեսակ: Բացի դրանից, նա չարաշահել էր թագավորի վստահությունը, որը նրան ծառայության ընդունել էր, դասել իր մերձավորների շարքը, շնորհների արժանացրել՝ ուշադրություն չդարձնելով նրա ազնվական

⁴ St'u Авеста в русских переводах (1861-1996), էջ 72.

⁵ St'u Авеста в русских переводах (1861-1996)...., էջ 149-150, 170:

լինելու մասին փաստարկների անբավարարությամբ: Իսկ նա փաստորեն ցուցաբերել էր նաև ապերախտություն, «երախտամոռ» ու «անշնորհակալ» գտնվել թագավորի և զրադաշտական աստվածների նկատմամբ: Իսկ դրանք բոլորը հանցագործություններ են, որոնք հիմնականում պատժվել են «ծանր մահով», այն է՝ տևական տանջանքներով ուղեկցվող մահապատժով:

Նման հանցագործությունների դեմ, որոնց կատարողները հիմնականում համարվել են քրիստոնեական աղանդի ներկայացուցիչները, ժամանակին անհաշտ պայքար է մղելիս եղել դեռևս Տիրիդատ Երրորդ թագավորի հայրը՝ Խոսրով Երրորդ Մեծ թագավորը, որի մասին հիշատակում է Մովսես Խորենացին⁶: Եվ այդ պայքարը բոլորովին չի եղել Խոսրով Մեծի, հետո էլ՝ նրա որդու՝ Տիրիդատ Երրորդի, քմահաճության կամ կամակորության արդյունք: Նման պայքար պահանջում էր մղել զրադաշտական իրավունքը, կրոնը և այդ կրոնի սուրբ գիրքը՝ Ավեստան: Իսկ այդ պայքարի արդյունքում ձեռք բերված հաջողությունները դրա նախաձեռնողի համար, ըստ նույն իրավունքի դրույթների, ավելացնում էին աստվածների բարեհաճությանն արժանանալու և երկնային թագավորություն մուտք գործելու հնարավորությունները, և ոչ միայն: Բացի դրանից, և ամենակարևորը, անհավատության մեծան հրսևորումները համարվում էին այնպիսի ծանր մեղքեր, որոնք կարող էին հարուցել աստվածների զայրույթը ինչպես տվյալ, այնպես էլ բոլոր արիական երկրների հավատավոր ժողովրդի ու պետության (պետությունների) նկատմամբ: Ավեստայի «Վարախրան-յաշտի» 53-րդ տան բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ մեծան հակակրոնական և հակաիրավական արարքները կարող էին և հանգեցրել են աստվածների զայրույթին և որպես հետևանք՝ արիական երկրների վրա հրավիրել թշնամիների հարձակումներ, ասպատակումներ, արիացիների կոտորածներ⁷: Նման անձինք դիտվել են «Ահուրի և Զորոաստրի հակառակորդներ»⁸: Դրա համար էլ մեծան արարքների դեմ պայքարը պարտադրվել է իրավունքով և համարվել է թագավորների, մոզների սրբազան պարտքը:

Հետագայում Իրանի Հազկերտ Երկրորդ թագավորի ու նրա շրջապատի կողմից հենց այդպիսի «հիվանդությամբ» տառապողներ և «բուժվելու» կարիք ունեցողներ է դիտվել Մեծ Հայաստանի ամբողջ քրիստոնյա բնակչությունը: Դրա համար էլ այդ թագավորը և նրա կառավարությունը աշխատել են հայերին «բուժել», նորից հետ բերել դեպի զրադաշտություն: Դա չանելու դեպ-

⁶ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, գիրք 2-րդ, գլուխ 35, էջ 258 (259):

⁷ Տե՛ս Авеста в русских переводах (1861-1996)... էջ 72, 190-191, 206, 353:

⁸ Տե՛ս Авеста в русских переводах (1861-1996)... էջ 237, 266, 353:

քում, ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ թագավորի ու նրա պալատականների հոգու փրկությունը դրվում էր վտանգի տակ, ինչի համար անհանգստությունը հստակորեն առկա է Հագկերտ Երկրորդի և նրա նախարար Միհրներսեսի Արշակունու՝ հայերին հավատափոխ անելու մասին հրամանագրերում⁹:

Նման արարքների դեմ պայքարը իշխանությունների կողմից մղվել է համոզման ու հարկադրանքի մեթոդները զուգակցված կիրառելու միջոցով, բայց դրանց մեջ հատկապես կարևորվել և առաջնային է դիտվել համոզման մեթոդը: Դա նույնպես եղել է, ինչպես կտեսնենք, իրավական պահանջ: Առաջնակարգ հաջողություն է համարվել ոչ թե անհավատության, աղանդավորության, ամբարշտության մեջ մեղադրվողներին ոչնչացնելը (որը եղել է ծայրահեղ միջոց), այլ նրանց «ճիշտ» հավատի բերելը կամ այդ հավատից հեռացածներին հետ դարձնելը: Այդ գործընթացը այլաբանորեն կոչվել է «բուժում», «բժշկում» կամ «ապաքինում» և այդ իմաստով նշված տերմիններն Ավեստայում հիշատակվում են բազմաթիվ անգամներ («Վիդևդատ» մասի «Մահվան ծես» ֆրակարդի 20-րդ և 72-րդ, «Յասնայի» «Քարոզ հարցերի ձևով» գաթայի 16-րդ, «Խոմ-յաշտի» 16-րդ տներ և այլն)¹⁰: Ջրադաշտական իրավունքով ու կրոնով այլահավատները, անհավատները, ամբարիշտները, աղանդավորները համարվել են հոգեպես անառողջ, շեղումներ ունեցող և նույնիսկ՝ հոգևոր հիվանդությամբ տառապող: Ավեստական նորմերը պահանջում են նախ և առաջ նմաններին «բուժել», «ամոքել»՝ նրանց համոզելու, խրատելու, քարոզելու, սպառնալու և տանջելու, այդ թվում՝ կաշին քերելու ու հոշոտելու միջոցով, «փրկել» նրանց հոգիները և նրանց դարձնել զրադաշտական, իսկ այդ կրոնից հեռացածին վերադարձնել ճշմարիտ հավատին: Նման փորձերի ծախսը ունը միայն, և այն էլ միայն կապված նախկին զրադաշտականին նորից զրադաշտական դարձնելու հետ, կարող էր բերել քրեական պատիժների կիրառման:

Այսպես՝ Ավեստայի «Քարոզ հարցերի ձևով» գաթայի 16-րդ տանը Ջորոաստրը Սիուր-Մազդին (Արամազդին) խնդրում է իրեն խրատել այնպես, որպեսզի ինքը կարողանա «աշխարհիում լինել գլխավոր բուժիչ», այսինքն՝ անհավատ ազգերին ու մարդկանց իսկական հավատի բերող, զրադաշտական աստվածներին ենթարկեցնող և նմանների գլխավոր: Նրա այդ խնդրանքը, ի-

⁹ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ. հրատ., 1982, էջ 96-99: Տե՛ս նաև **С. А. Хачатрян**. Указы Ездигерта Второго и его министра Михрнерсеха об отречении армян от христианства и их аксиологический, юридический, логический и социологический анализ. Ереван, 2009.

¹⁰ Տե՛ս **Авеста в русских переводах (1861-1996)**... էջ 102, 115, 126 և այլն:

հարկե, բավարարվել է: Ավեստայի «Վիդևդատ» նասքի «Շունը» ֆրակարդի 53-րդ ստանսուն Ջորոաստրը հարցնում է Ահուր-Մազդհին. «Ով նյութական աշխարհի ստեղծող, արդարակյաց. Ե՞րբ այս բնական վայրեր հետ կգան երջանկությունը և լիությունը, առողջությունն ու բուժիչությունը (ամոքիչությունը), ծաղկումը, բազմապատկումն ու ծլումը, և երբ՝ հացի ու արոտավայրերի աճը»: Այդ հարցի պատասխանն Արամազդի կողմից հետևում է նույն ֆրակարդի 56-րդ ստանսուն: Այնտեղ ասվում է, որ այդ ամենը հետ կարող են գալ միայն տեղի բնակիչների՝ անհավատությունից բուժվելու և հավատացյալ դառնալու դեպքում ու պայմանով¹¹:

Ավեստայի «Վիդևդատ» նասքի «Առասպել Յիմայի մասին» ֆրակարդի 29-րդ ստանսուն խստորեն դատապարտվում է կրոնական անհավատությունն ու ամբարշտությունը: Այնտեղ ասված է. «Թող այնտեղ չլինի վիճաբանություն (ամբարշտություն — Ս. Խ.), զրպարտություն, ամբարեհաճություն, անհավատություն, աղքատություն և խաբեություն...»: Ավեստայի «Կրտսեր Յասնայի» «Բարենադիություն տանն այս» աղոթքում բերված է հետևյալ ավեստական հակադրությունների շարքը. «Թող այս տանը հաղթահարի՝ խոհեմությունը ամխոհեմությանը, խաղաղությունը՝ վեճին, առատաձեռնությունը՝ ժլատությանը, հավատը՝ անհավատությանը, ճիշտ խոսքը՝ սուտ խոսքին, առաքինությունը՝ սոխն (դրուջին)»: Ավեստայի «Ջայմադ-յաշտի» 33-34-րդ տներում էլ ասված է, որ մարդկության ոսկեդարը վերացել է, իսկ Յիման, որը Արամազդի ցուցումով և պլանով ոսկեդարը կառուցող հերոս-ցիվիլիզատորն էր, «տապալվել»՝ անհավատ դառնալու պատճառով¹²: Այստեղ առավել ակնհայտորեն է ցուցադրված այն հանգամանքը, որ նույնիսկ առանձին նշանավոր հերոսի անհավատությունը (հավատից և աստվածներից հեռանալը) կարող էր և հանգեցրել է գլոբալ բացասական հետևանքների:

Այս ամենի լույսի ներքո միանգամայն պարզ և հասկանալի է դառնում, թե ինչու է Տիրիդատ Երրորդ թագավորն անձամբ զբաղվել իր անմիջական ենթակայի գործի քննությանը և օրեր շարունակ նրան համբերատար կերպով ու համառորեն հարցաքննել՝ այդ ընթացքում հրամայելով նրան տանջել և տառապանքներ պատճառել: Թագավորը Արամազդի կողմից կոչված լինելով իր երկրի գլխավոր «բժիշկ» և «ամոքիչ», անկեղծորեն մտահոգված է եղել ոչ միայն և ոչ այնքան Գրիգոր Լուսավորչի հոգու փրկությամբ, երբ անկեղծորեն և հետևողականորեն փորձել է նրան համոզել հրաժարվել «մոլորություննե-

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 118-119, 136:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 80, 159, 404:

րից»: Գաղտնիք չէ, որ Գրիգորը, անշուշտ, գրագետ էր, տիրապետում էր բազմաթիվ լեզուների, խիստ օգտակար անձնավորություն և պաշտոնատար անձ էր և նրան մահապատժելը կարող էր բացասական անդրադարձ ունենալ թագավորական գրասենյակի և շտաբի աշխատանքների համար: Բացի դրանից, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, նա սիրել է Գրիգոր Լուսավորչին և աշխատել նրան «դարձի» բերել: Բայց նրա կյանքը փրկելը եղել է թագավորի նպատակներից ընդամենը մեկը և ոչ գլխավորը: Նրա գլխավոր նպատակը առավելապես պետաիրավական է: Նա փորձում է այդ կերպ շիջել աստվածների զայրուքը, իրեն և իր երկիրը զերծ պահել նոր փորձություններից, որպեսզի ինքը չբաժանի Յիմայի, իսկ երկիրը՝ նրա կառուցած ոսկեդարի բախտը: Երկիր, որը նա հետ էր նվաճել, իր նախնիների թագավորությունը վերականգնել աներևակայելի ճիգերի գործադրման հետևանքով: Եվ հենց դրա համար է նա քննության ընթացքում համառորեն ձգտում Գրիգոր Լուսավորչին ամեն կերպ «ամոքել», հետ բերել «ճշմարիտ» հավատին: Նրան զանազան կտտանքների ենթարկելը նույնպես միտված է այդ նպատակին: Եվ այդ ամենը բացառիկ ճշմարտացիությամբ ներկայացրել է դեպքերի ականատես Ագաթանգեղոսը:

Ըստ Ավեստայի «Վիդեդատ» մասքի «Յոդը» ֆրակարդի 41-42-րդ ստանսների¹³ նման հանցագործություններ կատարած նախկին զրադաշտականը պետք է անկեղծորեն զղջար իր կատարած հանցագործությունների համար, երդում տար այլևս նման արարքներ չկատարել, հետ դառնար նորից զրադաշտության՝ հրաժարվելով «մոլորություններից»: Առանց դրա և առանց Գրիգորի կողմից զրադաշտականի «Հավատո հանգանակն» ընդունելու, թագավորը չէր կարող կամայականորեն Գրիգոր Լուսավորչին ազատել պատասխանատվությունից և պատժից: Քանզի զրադաշտական պետությունը իրավական պետություն էր: Նման արարքների մեջ մերկացված զրադաշտականը միանշանակորեն դատապարտվում էր ծանրագույն պատիժների, այդ թվում՝ տարբեր ձևերով մահապատիժների՝ Խոր Վիրապում փակելուն, մաշկը քերելուն, մաշկը քերթելուն և այլն: Նա կարող էր ենթարկվել նաև ազատազրկման, բայց այն նույնպես ավարտվում էր, ի վերջո, գլխի կաշին քերթելով, երբ ազատազրկվածը ծերանում էր: Այդ մասին ուղղակի նշում կա Ավեստայի «Վիդեդատ» մասքի «Յոդը» ֆրակարդի 20-րդ ստանսում: Պետք է նշել, որ եթե Ավեստայի այդ ֆրակարդի նշված ստանսը ռուսերենում թարգմանված է որպես «чтобы...ему башку по основанию отъяти...», ապա Ֆրից Վոլֆի կողմից նույն ստանսի գերմաներեն թարգմանության մեջ այդ բառակապակցությամբ

¹³ Տես նույն տեղում, էջ 91:

յան փոխարեն օգտագործվել է «Kopf schinden» բառակապակցությունը¹⁴, որը բառացի նշանակում է «զլուխը քերթել», այն է՝ զլխի կաշին քերթել, ինչն ավելի ճիշտ է:

Գրիգորի հարցաքննության ընթացքում թագավորը ստեպ-ստեպ հրամայում էր նրան կտտանքների ենթարկել, քանզի քարոզներն ու խրատները, որպես քննության մեթոդներ, «դարձի» բերելուն չէին նպաստում, իսկ նրա կյանքը փրկելու և հայոց երկրին օգտակար լինելու այլ հմար չկար: Եվ ահա, նախաքննության 20-րդ օրը, երբ Գրիգոր Լուսավորիչը հերթական անգամ հրաժարվում է «դիցերին» պաշտելուց և նոր ուժով ամբարշտություն դրսևորում, ապա թագավորը հրամայում է նրա կողերը **քերել երկաթի քերիչներով**, մինչև «ռռգգան վայրքն ամենայն յարենն նորա»: Դրա հետևանքով նրա մարմինը ուղղվում է արյունով և այլանդակվում: Դրանից անմիջապես հետո, երբ նորից Գրիգորը վճռական կերպով հրաժարվում է զրադաշտական դառնալ, ապա նրան մերկացնում և նետում են գետնին խիտ փռած բազում սակառներ ունեցող երկաթյա տատասկի վրա, որից հետո քարշում և թաղում են դրա մեջ, որը նույնպես կարելի է համարել կաշին քերելու և հոշոտելու յուրահատուկ տեսակ¹⁵:

Կաշին քերելու միջոցով մարդու մարմինն այլանդակելու և նրան տառապանքներ պատճառելու մասին հաջորդ հիշատակումը Ագաթանգեղոսի գրքում վերաբերում է կույս Զեփսիմենին: Այս անգամ արդեն մաշկը քերելը կամ հոշոտելը նրա նկատմամբ կիրառվում է ոչ թե որպես քննության մեթոդ, այլ որպես պատիժ և հատուցում՝ նրա կողմից կատարած «հանցագործությունների» համար, որոնք են դարձյալ անհավատությունը, ամբարշտությունը, աղանդավորությունը, աստվածների նկատմամբ անշնորհակալ լինելը, թագավորին դիմադրելը, վեհությանը անպատվելը, անարգելը և այլն: Ընդ որում, այստեղ կաշին քերելը վերածվում է հոշոտման: Զեփսիմենի լեզուն կտրելուց, աչքերը հանելուց, փորը բացելուց, աղիքները թափելուց և մարմինը խորովելուց հետո դատավճիռն ի կատար ածող դահիճները, ի վերջո, «անդամ անդամ յօշեին զնա»: Դա նշանակում է, որ նրա մարմինը, մաշկը հոշոտել են քերելու և պատռելու միջոցով, և ոչ թե մարմնի մասերն իրարից անջատելու միջոցով, ինչպես որ դա թարգմանվել է:

Պետք է նկատել, որ Ագաթանգեղոսի գրքի թարգմանիչները չեն էլ հասկացել այդ երկի իմաստը, չեն գիտակցել դրա նշանակությունը, և հոշոտելու

¹⁴ Տես նույն տեղում, էջ 89: Տես նաև՝ Wolff Fritz. Avesta- Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae, s Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, էջ 328.

¹⁵ Տես Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 79-85:

մասին այս պարբերության (199) սխալ թարգմանությունը նրանց միակ սխալը չէ: Այնտեղ ասված է, որ դահիճները «անդամ անդամ յօշեին զնա»: Դա նշանակում է, որ Զոփիսիմեի մարմնի մասերը առանձին-առանձին հոշոտվել են, այսինքն՝ նրա մաշկը վնասվել, ծակող-քերող գործիքների միջոցով խորապես և հիմնավոր կերպով քերվել, պատառոտվել է: Իսկ այդ նույն բառակապակցության հին հայերենից կատարած թարգմանությունից դուրս է գալիս, որ Զոփիսիմեին ենթարկել են անդամահատման, իսկ երբ մահապատժին ներկա կույսերը կամեցել են «հավաքել և թաղել նրա մարմնի մասերը»¹⁶, ապա սրահար սպանվել են: Նման թարգմանությունը ոչ միայն բնագրից չի բխում, այլև սկզբունքորեն և ըստ էության ճիշտ լինել չի կարող: Զրադաշտական մահվան ծեսի կանոնների համաձայն՝ մահացածների կամ մահապատժավածների դիակները նախապես վերջույթներից ու մազերից կապվել, «պրկվել» են դախմի վրա, ինչպես որ է նաև այս դեպքերում: Դա արվել է ըստ ծիսակարգի և այն նպատակով, որպեսզի շները, թռչունները մահացածի մարմինը հոշոտելիս դրա մասերը քարշ չտան և դրանց կտորներով չպղծեն սրբազան տարերք հանդիսացող հողը, ջուրը, կրակը: Այնպես որ մահացածի մարմինը մահապատժի վայրում կամ որևէ այլ տեղում մահվան ծեսի իրականացման ժամանակ մաս-մաս անել ոչ միայն արգելված էր, այլև դա հանցանք էր համարվում, և դահիճները չէին կարող Զոփիսիմեին մաս-մաս անել:

Այդ տեսարանի՝ Ազաթանգեղոսի նկարագրությունից պարզվում է նաև, որ Զոփիսիմեի լեզուն կտրելուց, աղիքները դուրս թափելուց և աչքերն հանելուց հետո է միայն նրա մարմինը հոշոտվել, այսինքն՝ նրա մարմնի վրա խորը վերքեր են բացել քերելու միջոցով և այդպես այլանդակվել է նրա մարմինը: Թվում է, թե նման դաժան խոշտանգումներից հետո նման պատժատեսակը լրիվ ավելորդ է, բայց դա այդպես չէ: Ըստ «Դատաստան ի մենոգ ի խրատի» 5-րդ գլխի՝ դև Վիզարշը՝ աստվածների դատարանում դժոխք գնալուն դատապարտված հոգուն դժոխք քարշ տալիս «դաժանորեն ծեծել և տանջել է» նրան: Հասկանալի է, որ տանջելու և մարդուն այլանդակելու ամենակատարյալ ձևը նրա կաշին քերելն ու հոշոտելն է եղել, ինչպես Զոփիսիմեի դեպքում է¹⁷: Նրա մարմինը այդ կերպ այլանդակվելով պետք է պարզապես համապա-

¹⁶ Տե՛ս Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 114 (115): Տե՛ս նաև՝ **Агатагелос.** История Армении. Перевод с древнеармянского на русский язык, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна. Ереван, «Наири», 2004, էջ 74.

¹⁷ Տե՛ս Зороастрийские тексты. Суждения Духа разума (Дадестан-и меног-и храт). Подготовлено к печати О. М. Чунаковой. М., «Восточная литература», 1997 (Памятники письменности Востока, СХIV), էջ 214:

տասխանեցվեր նրա «այլանդակ», «դիվական» հոգուն՝ նրա մուտքը դժոխք ապահովելու համար: Մահապատիժը եղել է ծիսական արարողություն և ընթացել դրա համար սահմանած կանոններով: Դրանով վերարտադրվել է դժոխային որևէ պատկեր: Դժոխքում հանցագործների հոգիներին սպասող դները և խրափաթարները, ըստ «Արտա Վիրապ Մամակի», անմիջապես ձեռնամուխ էին լինում նրանց այլանդակմանը՝ զանազան կոտանքների ենթարկելով նրանց, այդ թվում՝ քերելով, հոշոտելով ու քերթելով նրանց կաշին:

Այդ ամենին պետք է նաև ավելացնել, որ դահիճները, կույսերի նկատմամբ պատիժներ կիրառելիս, ոչ մի կամայականության չեն դիմել՝ հատկապես՝ իրենցից պատիժներ և պատժաձևեր չեն հնարել: Ամեն ինչ կատարվել է դատավճռի հիման վրա, թագավորի հրամանով, և Ավեստայի «Վիդեդատ» նասքի «Մահվան ծես» ֆրակարդի սահմանած կարգի ու կանոնների: Իսկ դատավճիռը կոչվել է նաև հրաման (ֆրաման, ֆարման)¹⁸, և տվյալ դեպքում ամեն ինչ կատարվել է թագավորի հրամանով, նրա կայացրած դատավճռի հիման վրա, որի մասին Ագաթանգեղոսը հատուկ նշում է կատարում: Այս առթիվ պետք է նորից հիշեցնել, որ թագավորը, ի պաշտոնե, եղել է նաև գլխավոր քուրմ և գերագույն դատավոր՝ միաժամանակ: Ինչպիսին է եղել նրա հայր Խոսրով Երրորդը և նրանց նախնի Տիրիդատ Առաջինը, ինչպես նաև բոլոր Սասանյան թագավորները՝ սկսած Արտաշիր Առաջին Սասանյանից:

Սյուս սարսափազդու և օրենքով նախատեսված պատիժը եղել է կաշին քերթելը կամ մորթագերծումը, որը նշանակվել է առավել ծանր հանցավոր արարքներ կատարելու համար: Ագաթանգեղոսը, որպես ականատես¹⁹, նկարագրում է նաև Սուրբ Գայանեի և մի քանի այլ կույսերի մահապատժի տեսարանը այդ պատժաձևի միջոցով: Դահիճները նրանց մահապատժում են կաշին կամ մաշկը (մորթին) քերթելու կամ «մորթելու», այն է՝ մորթագերծ անելու եղանակով: Պետք է ասել, որ դա այդ ձևով կատարված մահապատժի միակ մանրամասն նկարագրությունն է աշխարհում: Դրա մասին նա ասում է, որ նրանց, դախնի վրա «պրկելուց հետո»... «...ծակեցին զմորթսն ի պնդունս նոցա և եղին փողս և փչելով այնպես կենդանույն **մորթեցին** զսուրբսն երեսին, ի

¹⁸ Տե՛ս **Периханян А. Г.**, Сасанидский Судебник. Ереван, Изд. АН Арм. ССР, 1973, часть 76, т. 13-17: **Սուրխայան, Ա. Գ.**, Հին իրանական իրավունքը ըստ «Սասանյան Դատաստանագրքի», Երևան, 1980, էջ 91:

¹⁹ Ագաթանգեղոսը եղել է Տիրիդատ Երրորդ թագավորի քարտուղարը, այն է՝ դպիրը և դպրապետը, իսկ դպիրները պարտավոր էին ներկա լինել նման դեպքերի, դատավարությունների ու պատիժների կիրառման ընթացակարգերի և գրի առնել կատարվածը: Նա եղել է նաև քրիստոնյա և որպես այդպիսին չէր կարող ներկա չլինել սրբերի մահապատժին: Եթե ընդունենք նաև, որ նա մահապատժին ներկա չի եղել, ապա դրանց նկարագրությունները կարող էր լսած լինել ներկա եղած զրագիրներից կամ էլ այլ ներկաներից, որոնց հետ պարզապես չէր կարող ծանոթ չլինել:

ներքուստ ի վեր մինչև ի ստինսն և ծակեալ զծոծորակսն՝ և ի լեզուսն ընդ այն հանէին...և քանզի դեռ ևս կային կենդանի՝ և ապա բարձին զգլուխս նոցա սրով»²⁰: «Գլուխները բարձել» բառերն էլ այստեղ պետք է հասկանալ ոչ թե գլուխները կտրելը, ինչպես այնտեղ թարգմանված է նոր հայերենով՝ վերոնշված պատճառաբանությամբ: Այստեղ գլխի կաշին նույնպես քերթելու մասին է խոսքը, թերևս հետագայում նրանցից խրտվիլակ պատրաստելու և հրապարակներում ցուցադրելու համար՝ կրոնական և հակաաղանդավորական քարոզչության նպատակով: Եթե «բարձելը» «կտրել» նշանակեր, ապա կօգտագործվեր «հատել» բառը, որը մինչ այդ Ազաթանգեղոսի կողմից արդեն օգտագործվել էր Հռիփսիմեի լեզուն կտրելու դեպքում:

Հենց նման կերպ իրավախախտի գլխի կաշին բշտել-հանել է պահանջում Ավեստայի «Վիդևդատ» մասքի «հողը» ֆրակարդի 20-րդ ստանսը, որի մասին արդեն ասվել է: Ընդ որում, դատապարտյալին մահապատժելը կաշին քերթելու և այլ եղանակներով իրավական է համարվել միայն այն դեպքում, եթե դրանց կիրառման ժամանակ դատապարտյալը դեռևս ողջ է եղել և ոչ թե մեռած, ինչպես այս դեպքում է: Եվ միայն նման դեպքում է պատժի նպատակները համարվել ձեռք բերված:

Հռիփսիմեի և Գայանեի երկխոսությունը՝ վերջինիս Հռիփսիմեի մոտ պալատ բերման ենթարկելուց հետո, նրա կողմից Հռիփսիմեին համոզելը, որ նա հաստատուն մնա քրիստոնեական հավատին և դիմադրի թագավորին, նման է «Մակաբայեցիների Երկրորդ գրքի» 7-րդ գլխում նկարագրված յոթ եղբայրների ու նրանց մոր երկխոսությանը, տանջանքներին, մահապատժին ու դրա պատճառներին: Այնտեղ Սելեվկիայի (նաև՝ զրադաշտական Հայաստանի) թագավոր Անտիոքոսը փորձում է ստիպել այդ եղբայրներին հրաժարվել հրեական հավատից և դառնալ հեթանոսության: Մի կրոնի, որը, փաստորեն, հելենիստական էր, այն է՝ զրադաշտականության և հունական կրոնի մի խառնուրդ, որում ավելի շատ է եղել զրադաշտականը, միթրայականությունը: Նրանք հրաժարվում են թագավորի պահանջը կատարելուց, իսկ նրանց մայրը, որը ներկա էր նրանց տանջահարմանը, համոզում է իր որդիներին քաջաբար կրել տանջանքները և զոհվել, բայց հավատափոխ չլինել: Եղբայրները և նրանց մայրը ենթարկում են նույն տանջանքներին ու մահապատժին, ինչպես Գայանեն և մյուս կույսերը: Նրանց ենթարկում են նաև այնպիսի խոշտանգ-

²⁰ Տե՛ս Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 120 (121): Տե՛ս նաև՝ **Агатаңгелос**, История Армении. Перевод с древнеармянского на русский язык, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатыана. Изд. "Наири" Ереван, 2004, էջ 74-75.

ման, ինչպիսին է «գլխի կաշին մազերով հանդերձ շուռ տալը»²¹: Դա նշանակում է, որ Սելևկիայի Անտիոքոս թագավորը, ով փաստորեն զրադաշտական թագավոր էր և զրադաշտականների թագավոր, հետո միայն հունական և հույների թագավոր, այդ եղբայրների նկատմամբ կիրառել է զրադաշտական իրավունքով նախատեսված պատիժ: Մովսիսական և հին հունական օրենքներում նման պատժատեսակ չի հիշատակվում: Դրա փոխարեն նման պատժատեսակներ հիշատակվում են պարսկական զրադաշտական աղբյուրներում:

Համաձայն պարսկական զրադաշտական իրավունքի ճանաչման աղբյուր «Արտա Վիրապ Մամակի» 21-րդ գլխի՝ Արտա Վիրապը՝ աստվածներ Սրոշ Առաքինու և Ատր Յազատի ուղեկցությամբ դժոխքում շրջագայելիս տեսնում է այնտեղ տառապող «մի մարդու հոգի, որի գլխի կաշին (դները) լայնացնում էին («Արտա Վիրապ Մամակի» ռուսերեն տարբերակում «լայնացնել» բառի փոխարեն օգտագործվել է քերթել - «сдирать» բառը) և ծանր մահով սպանում նրան»: Նույնի 79-րդ գլխում էլ նա այնտեղ տեսնում է, թե ինչպես «մի եղջերու երկու արույրե եղջյուրներով նրա (մեղավոր հոգու) մարմինը քերթում էր. և նա երկաթի բևեռը մխում էր նրա կառափի (կամ սրտի) մեջ» (ռուսերեն տարբերակում՝ «գլխի մեջ»)²²: Նույն աղբյուրի 87-րդ գլխում էլ Արտա Վիրապը դժոխքում տեսնում է մի կնոջ հոգու, որն «իբր մարմինն ու երեսը քերթում էր երկաթե սանրով»²³: Այս պատկերը, ինչպես տեսնում ենք, հար և նման է Ազաթանգեղոսի գրքի 111-րդ պարբերությանը, որում նկարագրված է Գրիգորի կողերը «երկաթե քերչօք» քերելու տեսարանը²⁴:

Այսպիսով՝ կասկածյալի, դատապարտյալի կաշին, մաշկը կամ «կողերը» հատուկ քերիչով քերելը, մորթազերծ անելը, ինչպես նաև այն բոլոր մարմնական պատժատեսակները և մահապատիժների տեսակները, որոնք նկարագրված են Ազաթանգեղոսի կողմից, զրադաշտական են, հին հայկական կամ նաև հին հայկական, և հետո նոր միայն՝ իրանական և կիրառվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ Իրանում: Իրանի թագավոր Շապուհ Երկրորդը հրամայում է «մորթել զգորավարն հայոց Վասակ և զմորթն հանել և լնուլ խտով...»²⁵: Մինչև այժմ կարծիք է եղել, որ տվյալ դեպքում Իրանի թագավորը կամայականություն է թույլ տվել՝ սպանելով Վասակ Մամիկոնյանին նման

²¹ Տե՛ս Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր Կտակարանների, Հայաստանի աստուածաշնչային ղեկերութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 698-699:

²² Տե՛ս Книга о праведном Виразе (Арда Вираз Намар). Перевод со среднеперсидского (Пехлеви), введение и примечания А. И. Колесникова. Луганск, 1997, էջ 101.

²³ Տե՛ս Արտա Վիրապ Մամակ, էջ 68, 101, 104:

²⁴ Տե՛ս Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 72 (73):

²⁵ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 260 (261):

սահմանեցուցիչ միջոցով: Այնինչ նա վարվել է իրավունքով, և կիրառել իրավունքով նախատեսված պատիժ: Նա իրավունքի նորմի հիման վրա նախապես մեղադրել է Արշակ Երկրորդին և Վասակին պետական դավաճանության (Արշակ Երկրորդին թագադրել էր Շապուհ Երկրորդը, որին էլ հայոց թագավորը հավատարմության երդում էր տվել և մտել Իրանական պետությունների միության մեջ), անշնորհակալության, խորամանկության, ստի, հանդգնության և այլ հանցագործությունների մեջ: Այստեղ խոսել կամայականության մասին պարզապես ավելորդ է: Այս ամենը, պետք է ասել, աննկատ են մնացել հայ իրավունքի պատմությամբ զբաղվող գիտնականների, գրականագետների ու պատմաբանների կողմից²⁶:

Ջրադաշտական շատ արգելիղ, ինչպես նաև թույլատրող, խրախուսող նորմեր, այդ թվում՝ անհավատությունը, աղանդավորությունը, անշնորհակալությունը, երկմտությունը, սուտը և այլն, կամ՝ սերը, շնորհակալությունը, ժուժկալությունը և այլն, ինչպես նաև զանազան կարգի քննչական-դատավարական մեթոդներ ու պատիժներ, այդ թվում՝ կաշին (մորթը) քերելը և մորթագերծ անելը, հայկական քրիստոնեական իրավունքին են անցել զրադաշտականից: Մի բան, որը չէր կարող անել, և որին չէր կարող նաև նպաստել Մեսրոպ Մաշտոցը: Նա իրանահպատակ էր, եկեղեցու և պետության մեջ բարձր պաշտոն չէր զբաղեցնում, օրենսդիր չէր և չէր կարող լինել: Բացի դրանից, այդ պատիժներն արդեն իսկ նրա ժամանակ առկա էին հայկական քրիստոնեական իրավունքում: Դրանք ժամանակին օրինականացրել էր Գրիգոր Լուսավորիչը: Բացի դրանից, Մաշտոցի կողմից նման բան անելը կարող էր համարվել զրադաշտականության քարոզ և դրա վերածննդին աջակցելու փորձ: Իսկ նա ուժերին ներածի չափով պայքարել է դրա վերածննդի դեմ: Դրա արդյունք է այն, որ նա հին հայկական տառերի որոնումներ կատարեց և դրանք Սամոս կղզում գտնելով ու Չայաստան բերելով՝ կանգնեցրեց զրադաշտական քաղաքակրթության և մշակույթի աճող ազդեցությունը:

Ջրադաշտական, այն է՝ հին հայկական իրավունքը, դրա նորմերը, պատժատեսակները կարող էր ընդօրինակել, ռեցեպցիայի ենթարկել, քրիստոնեացրել Գրիգոր Լուսավորիչը՝ աշխարհում առաջին հեղափոխության կազ-

²⁶ Տե՛ս Թովմասյան Ա. Թ., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, 2 հատորից, Երևան, ԵՊՀ իրատ., 1962, 1977: Սուքիասյան Ա. Գ., Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը», Երևան, «Միտք», 1965: Սուքիասյան Ա. Գ., Հին իրանական իրավունքը ըստ «Սասանյան Դատաստանագրքի», Երևան, ԵՊՀ իրատ., 1980: Նույն ինքը. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (3-9 в.в. н.э.). Ереван, Изд. ЕГУ, 1963; **Периханян А. Г.**, Сасанидский Судебник. Ереван, Изд. АН Арм. ССР, 1973; Она же: Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды. М., 1983:

մակերպիչն ու ղեկավարը, քրիստոնեական առաջին պետության հիմնադիրը, նրա օրենսդիրը, հոգևոր պետը և գաղափարախոսը: Այս ամենի վկայությունն է նաև «Հաճախապատում ճառքը», որի պատկանելությունը Գրիգոր Լուսավորչի գրչին մեր կողմից արդեն իսկ հիմնավորվել է լիովին և անդառնալիորեն²⁷: Նա է, որ գնացել և կարող էր գնալ այդ երկու քաղաքակրթությունների սերտացման՝ կոնվերգենցիայի ու դրանց շարունակականությունը ապահովելու²⁸, և ոչ թե զրադաշտականության վերացման ու լիակատար մերժման ուղիով: Դա պարզապես հնարավոր էլ չէր: Քանզի բռնություն գործադրելով և միանգամից գնալով զրադաշտական (ազգային) վերացնելու ուղիով՝ նա ի վիճակի չէր լինի վերացնել հայկական հին զրադաշտական մշակույթը, դրա ազդեցությունը, մասայաբար տարածել քրիստոնեությունը և ստեղծել աշխարհում առաջին քրիստոնեական պետությունը և մշակույթը:

Այն, որ կաշին քերելու քննչական մեթոդն ու պատժատեսակը անցել է քրիստոնեական իրավունքին, վկայված է «Հաճախապատում ճառքում»: Կաշին քերելու մասին հիշատակում կա «Հաճախապատում ճառքի» ԺՁ ճառի 15-18 տներում, որոնցում ասված է. «Եւ ամենայն սուրբք իւրեանց առաջնորդութեամբ ճշմարտեալ խոնարհութեամբ առ Տէրն ի բարծունս ընթացուցանեն զամենայն հաւատացեալս յԱստուած. զի արժանի լիցին յամենեցունց Տեառնէն փրկութեան եւ քաւութեան սխալանացն բարեխաւութեամբ սրբոցն, եւ այլ մի եւս դառնալ ի դժնդակ վարս սատանայի: Այլ լսել զիւրաքանչիւրոցն նահատակութիւնս եւ զկատարեալ սուրբ սէրն, որ առ Աստուած էր յոյսն նոցա համբերութեանն, նախանձ ունել Քրիստոսի: Որ հրով եւ ցրտով, հրով եւ սառամանեալք, **քերանովք և հարուածովք**²⁹, բանդիւք եւ կապանաւք, սովով եւ ծարաւով, սրով եւ մահու սպառնալեալք եւ ողորջանաւք, զի երկշտոն զարհուրեսցի եւ արին կակղասցի: Այլ ոչ ինչ կարաց այսպիսեացս չարաչար տանջա-

²⁷ Հաճախապատում ճառքի պատկանելությունը Գրիգոր Լուսավորչի գրչին մեր կողմից արդեն հիմնավորվելու մասին տես Ս. Ա. **Խաչատրյան**, «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 14, 2012: Նույն ինքը. Նորից հայկական այբուբենի ստեղծման հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 14, 2012:

²⁸ Տես **Скворцов В. Н.**, Доктрина конвергенции и ее пропаганда. М., «Политическая литература», 1974.

²⁹ Վ. Համբարձումյանը «Հաճախապատում ճառքի» իր թարգմանության մեջ «քերանովք» բառի փոխարեն տույլ տանը օգտագործել է «քերծումներով» բառը, որը ճիշտ չէ: Տես **Գրիգոր Լուսավորիչ**, Հաճախապատում ճառք, թարգմ., առաջաբանը, ծանոթագրությունները Վ.Համբարձումյանի, Թեհրան, 2003, էջ 226: Ընդ որում, նույն թարգմանության 348-րդ էջում այդ բառի կապակցությամբ առկա է նրա ծանոթությունը, որում նշվում է, որ բնագրում այդ բառի նախնական ձևը «քերունն» է: Նույն «քերանովք և հարուածովք» բառերը «Հաճախապատում ճառքի» ռուսերեն տեքստում ունեն «скребницами и ударами» տեսքը, որը ճիշտ է: Տես Многовещательные речи. Перевод с древнеармянского, предисловие и примечания С. С. Аревшатяна. Ереван, «Нарири», 2011, էջ 161.

նացն վիշտը եւ նեղութիւնը եւ վտանգը մարմնոյ քակտել եւ խզել զսուրբ սէրն որ յԱմենասուրբ Երրորդութիւնն»³⁰: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ «քերելը», ինչպէս նաև այստեղ թվարկված շատ այլ պատիժներ, այդ թվում՝ դաժան համարվող, որոնք հանդիպում են նրա այս ծառերում, նա ռեցեպցիայի է ենթարկել զրադաշտականից և «քրիստոնեացրել»:

Այն որ կաշին քերելը որպէս պատժատեսակ անցած է եղել հայկական իրավունքին և կիրառվել որպէս պատիժ՝ վկայում է նաև եզնիկ Կողբացին: Նա գրում է. «Իսկ եթէ տեսանենք, թե թագաւորն զիրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ, և դատաւորն զգողն և զաւագակն **պրկէ և քրէ** (սինքրոն թարգմանութեան մեջ «քերէ» բառը թարգմանված է որպէս «տանջել», որը սխալ է - Ս. Խ.)՝ վնասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ.... և այլքն ամենեքեան զիրաքանչիւր զանցիւր զանարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխանօք, յայտ է թե չարիքն որք գործին՝ կամածինք են և ոչ բնականք»³¹: Սա նշանակում է, որ պետական քննչական մարմինները և դատարանները իրավունք են ունեցել զողութեան, ավագակութեան, և իհարկե՝ այլ ծանր հանցագործություններ քննելիս՝ կասկածյալի վրա որպէս ներազդելու միջոց, ինչպէս նաև ամբաստանյալի նկատմամբ օրենքի հիման վրա նշանակվող պատիժ՝ կիրառել «պրկելը», «կաշին քերելը», «քերթելը»: Այս վկայությունը կասկածի տեղ չի թողնում, որ ներգործության այդ միջոցները առկա են եղել նաև վաղ քրիստոնեական իրավունքում, որին են անցած եղել զրադաշտականից և ոչ թե մովսիսական կամ քրիստոնեական իրավունքից:

Ինչ վերաբերում է Աստվածաշնչին, ապա նրանում նման ներգործության միջոցների կամ պատիժների մասին հիշատակումներ չկան: Ինչպէս արդեն ասվել է, «Կաշին գլխին շուռ տալու» մասին հիշատակում է առկա միայն «2 Մակաբայեցիներ» երկրորդականոն գրքի 7-րդ գլխում: Այնտեղ փաստորեն զրադաշտական-հունական զավթիչները այդ պատիժը կիրառում են հրեա ընտանիքի անդամների նկատմամբ՝ նրանց հավատափոխ անելու նպատակով: Եվ այդ պատիժը զրադաշտական է և ոչ թե փոխառված եբրայական կամ մովսիսական իրավունքից, որում նման նորմ չկա:

Պետք է նաև ենթադրել, որ ոչ թե «քուրա», այլ հենց «քերել» և «քերթել» բառերից է առաջացել «քրեական» բառը և «քրեական իրավունք» հասկացությունը: Քուրայի մոտ կանգնել և աշխատել կարող էին միայն դարբինները,

³⁰ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 100:

³¹ Տե՛ս **Եզնիկ Կողբացի**, Եղծ Աղանդոց, Երևան, 1994, էջ 48- 50:

զանազան մետաղ ծուղողները, զարդարները, զինագործները: Այդպիսի արհեստները կապված են եղել որոշակի և կարևոր ընտանեկան-մասնագիտական զաղտնիքների հետ, որոնք խստագույնս պահպանվել են ամեն մեկից ու յուրաքանչյուրից, հատկապես՝ հանցագործներից և փոխանցվել սերնդեսերունդ: Բացի դրանից՝ քուրան եղել է հազվագյուտ երևույթ, իսկ հանցագործները՝ բազմաթիվ, և նրանց չնչին մասին անգամ քուրաների մոտ հնարավոր չէր լինի աշխատանքով ապահովել: Նրանց աշխատուժը կարող էր և օգտագործվել է մետաղահանքերում, բայց դրանք քուրայի հետ անմիջական կապ չունեն: Համեմայնդեպս, թվում է, որ «քրեական» բառը «քուրա» բառի հետ կապ չունի և չի ունեցել: Դա պատասխանատու ենթադրություն չէ, և նման ենթադրություն կատարողները պետք է այդ մասին մոռնան մոռենք՝ կարդալով այս տողերը:

Բանալի բառեր - զրադաշտական իրավունք, քրիստոնեական իրավունք, կաշին քերել, կաշին քերթել, հոշոտել, մահապատիժ, իրավախախտ, մարմնական պատժատեսակ, հավատ, կրոն

СОСКОБЛЕНИЕ И СДИРАНИЕ КОЖИ КАК НАКАЗАНИЕ ПО ЗОРОАСТРИЙСКОМУ И ДРЕВНЕХРИСТИАНСКОМУ АРМЯНСКОМУ ПРАВУ

С. А. ХАЧАТРЯН

*Кандидат юридических наук, доцент,
Преподаватель ГГУ*

В статье “Соскобление и сдирание кожи как наказание по зороастрийскому и древнехристианскому армянскому праву” рассматривается соскобление кожи подозреваемого в преступлении или проступке для причинения ему страданий и склонения его к даче правдивых показаний, а после расследования - в качестве наказания. Сдирание же кожи применялось исключительно как наказание за совершение тяжких уголовных преступлений. Обосновывается, что эти виды наказаний перешли в армянское христианское право из зороастрийского армянского права. Также делается вывод, что название “креакан” армянское уголовное право получило именно от названий этих наказаний “соскобление” и “сдирание” („керел“ и „кертел“), а не от названия кузнечного “горн” (“кура”), к которым, якобы, прикрепляли осужденных для выполнения принудительных работ.

SKIN SCRAPING AND PEELING AS PUNISHMENT IN THE ZOROASTRIAN AND ANCIENT CHRISTIAN ARMENIAN LAW

S. A. KHACHATRYAN

*Doctor of Law, Associate Professor,
GSU Lecturer*

The article “Skin scraping and peeling as punishment in the Zoroastrian and ancient Christian Armenian law” considers suspect’s skin scraping in crime or misdemeanor as a means for making him suffer and inducing him to give truthful testimony, and as a punishment after the investigation and establishment of guilt.

Skin peeling was used exclusively as a punishment for serious criminal offenses. It is substantiated that the Armenian Christian law has taken these types of punishment from the Zoroastrian Armenian law. It is also proved that the Armenian criminal law has taken the term “qreakan” from the Armenian names of these penalties (“qerel” and “qertel”) not from the name of blacksmith’s “furnace” (“qura”) to which the convicts were allegedly attached to perform hard labor.